«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

«26» օգոստոսի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրություն և կազմի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. 2023-2024 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. 6-րդ և 8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. Հումանիտար առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
9. Ըստ նոր ՀՊՉ-ների 5-8-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
11. 2024-2025 ուսումնական տարվա ԱՌԻՊ-ների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
12. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման նախնական քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
13. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների

իրականացում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրության և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողն առաջարկեց փոփոխություն չկատարել և Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ թողնել Մերի Դանիելյանին: Զեկուցողը նշեց, որ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված են «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «ՀԵՊ», «Հասարակագիտություն», «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքը և աշխարհը» առարկաները:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Շ.Հոսեփյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին անփոփոխ թողնել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահին և 2024-2025 ուսումնական տարում նույնպես առաջարկեցին Մերի Դանիելյանի թեկնածությունը, հաշվի առնելով նաև վերջինիս կողմից նախորդ ուսումնական տարում իրականացրած աշխատանքները:

Որոշեցին՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ ընտրել Մերի Դանիելյանին և հաստատել մեթոդմիավորման նոր կազմը՝ ընդգրկելով «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «ՀԵՊ», «Հասարակագիտություն», «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքը և աշխարհը» առարկաները դասավանդող ուսուցիչներին:

Լսեցին 3. 2023-2024 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց 2023-2024 ուսումնական տարում մ/մ կատարած գործունեության կարևորության, ձեռքբերումների և հաջողությունների մասին: Մեթոդմիավորման անդամների կողմից կազմակերպվեց արդյունավետ քննարկում՝ 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների և բացթողումների շուրջ: Քննարկվեցին նաև նոր ուսումնական տարվա անելիքներն ու սպասվող փոփոխությունների շուրջ կատարվելիք աշխատանքների մասին հարցերը:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ս. Հարությունյանը, Շ. Հովսեփյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունելով հումանիտար առարկաների մ/մ նախագահի հաշվետվությունը, ինչպես նաև մեթոդմիավորման 2023-2024 ուսումնական տարվա կատարած աշխատանքները, հաշվի առնելով նաև առկա բացթողումները, գործունեությունը գնահատել լավ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2023-

2024 ուսումնական տարվա կատարողականը:

Լսեցին 4. 6-րդ և 8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ս.Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024-2025 ուսումնական տարվանից 6-րդ և 8-րդ դասարաններում ևս ուսուցումը կիրականացվի նոր ՀՊՉ-ների համապատասխան, հետևաբար անհրաժեշտ է ուսումնական գործընթացը սկսելուց առաջ քննարկել առաջացած հարցերը, ուսումնասիրել երաշխավորված դասագրքերն ու ծրագրերը հետագա խնդիրներից խուսափելու համար:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու արդյունքների ամփոփումը՝ կապված նոր ՀՊՉ-ների գործընթացի իրականացման հետ՝ 5-րդ և 7-րդ դասարաններում:

Սոնա Հարությունյանը նշեց, որ անհրաժեշտ է ունեցած փորձը օգտագործել նաև գնահատումը ճիշտ կատարելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 6-րդ և 8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները:

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա վերջին նիստում ներկայացվել և քննարկվել է Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Սարգիսջանյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողները կարևորեցին 7-րդ դասարանում «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ժամերի փոփոխությունը՝ ըստ որի առաջարկեցին, ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, այս ուսումնական տարում նույնպես 3 դասաժամ հատկացնել հայոց լեզվին և 2 դասաժամ՝ գրականությանը, հիմք ընդունելով ծրագրային դժվարությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 7-րդ դասարանում «Հայոց լեզու» առարկայի ծրագրային նյութը ծավալուն է:

Սերգեյ Ավանեսյանը մանրամասն ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ուսումնական պլանը, հատկապես ուշադրություն դարձրեց նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններին, որոնց դեպքում մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը: Սերգեյ Ավանեսյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա»առարկային՝ 1 դասաժամ:
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ:
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը

հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։

- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ։

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց նաև 2-3-րդ, 5-8-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 2-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 8 դասաժամ (4 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
    - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար)։
    - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
    - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար) և

«Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (2 կիսամյակի համար)։

- նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Որոշեցին՝ 1. Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է)։

2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա»առարկային՝ 1 դասաժամ։
   - 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
   - 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
   - 9-րդ դասարաններում դպրոցական բաղադրիչի 2.5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հանրահաշիվ» առարկային՝ 0.5 դասաժամ։

3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 2-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 5-րդ դասարանում շաբաթական 8 դասաժամ (4 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ։
   - 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական)

բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ։

- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (1 կիսամյակի համար) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (2 կիսամյակի համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, դրանով նախատեսված հիմնական աշխատանքները։ Զեկուցողը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են առարկայական չափորոշիչներին, ծրագրերին համապատասխան։ Արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են ուսուցիչների կողմից, հիմք ընդունելով երաշխավորված ծրագրերը։

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Շ. Հովսեփյանը, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողները նշեցին, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները, կազմվել են առաջնորդվելով նախարարության կողմից հաստատված ծրագրերով, ինչպես նաև հիմք ընդունելով դպրոցում կիրառվող և հաստատված դասագրքերն ու նոր չափորոշչային պահանջները և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի հրամանի պահանջները։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները և ուսումնական պլանը։

Լսեցին 7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց նախագծային աշխատանքների կազմակերպման փորձը 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում և առաջարկեց առաջնորդվել նախորդ տարի 7-րդ դասարաններում իրականացրած աշխատանքների կազմակերպման փորձով: Հիշեցրեց նախագծային աշխատանքներ կատարելու կարգը, նշեց, որ մասնախմբի անդամների կողմից 7-րդ և 8-րդ դասարանների համար ներկայացվել են համապատասխան թեմաները: Զեկուցողը ներկայացրեց, որ ուսուցիչներն աշակերտական չաթերին են ուղարկել յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված թեմաները, ղեկավարներին, և արդեն իսկ աշակերտները բաժանվել են խմբերի, ընտրել են իրենց թեմաները և ղեկավարներին:

Զեկուցողը նաև նշեց Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը, ինչպես նաև առաջարկեց, հիմք ընդունելով վերոնշյալ կարգը նախագծային աշխատանքների պաշտպանություններն իրականացնել առարկայական հանձնաժողովներով, որի կազմում առաջարկեց ընդգրկել տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, տնօրենի տեղակալը:

Զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման մասին հրամանում:

Արտահայտվեցին՝ Ս.Հարությունյանը, Մ. Դանիելյանը:

Արտահայտվողները կարևորվեցին Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի պահանջները, դրանց իրականացումը, ինչպես նաև բոլորի ուշադրությունը հրավիրեց այն պահանջին, որ 7-րդ և 8-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից):

Որոշեցին՝ Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

Լսեցին 8. Հումանիտար առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց գործնական և գրավոր աշխատանքների կարևորության և դրանց անաչառ անցկացման մասին: Հիշեցրեց, որ նախընտրելի է համարվում, որ գրավոր աշխատանքների քանակը համապատասխանի առարկայի շաբաթական ժամաքանակին՝ կիսամյակի կտրվածքով, սակայն նշեց, որ հնարավոր է գրավորների քանակության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ՝ կախված ուսուցիչների առաջարկությունից, հավելեց, որ յուրաքանչյուր կիսամյակի մեկական գործնական (կամ լաբորատոր) աշխատանքի կատարումը կլինի պարտադիր:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Ս. Ավանեսյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին գրավոր աշխատանքների քանակության մեջ որևէ փոփոխություն չկատարել:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում նույնպես 1-9-րդ դասարանների բոլոր գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը պետք է հաստատվեն մեթոդական միավորումների կողմից, որից հետո միայն կկիրառվեն: Ինչը նաև հիմնավորեց այն հանգամանքով, որ զուգահեռ դասարաններում նույն առարկաներից աշակերտները գրեն նույնաբովանդակ աշխատանքներ, որպեսզի նաև ըստ դասարանների միջին որակական արժեքները նույնպես հնարավոր լինի պատշաճ կերպով հաշվարկել:

Ռ. Խաչատրյանն առաջարկեց 7-րդ դասարանում «Հայաստանի պատմություն» առարկայից գրավոր աշխատանքների քանակը կիսամյակի համար դարձնել 3-ի փոխարեն 2-ը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս տարի 7-րդ դասարանցիները կուսումնասիրեն նախորդ տարվա անցած նյութը:

Որոշեցին՝ Ապահովել ուսումնական տարվա ընթացքում սահմանված գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակն ու բազմազանությունը՝ համապատասխան հավելվածի, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարվա բոլոր առարկաներից տրվող գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատել մեթոդմիավորման կողմից, որից հետո կիրառել (կցվում է):

Լսեցին 9. Ըստ նոր ՀՊՉ-ների 5-8-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս.Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2024-2025 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան: Ըստ այդ չափանիշների 2024-2025 ուսումնական տարում 5-8-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.

8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) Տ-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.

3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը

Արտահայտվողը նշեց, որ նախորդ տարի նույնպես նոր ՀՊՉ-ներով ուսուցանվող դասարաններում կիրառվել են գնահատման վերոնշյալ չափանիշները, որոնք արդարացրել են իրենց: Արտահայտվողն առաջարկեց ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, այս ուսումնական տարվա ընթացքում նույնպես ձեռքի տակ ունենալ Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և ըստ անհրաժեշտության օտգվել դրանից՝ պահպանելով համապատասխան սկզբունքները, ինչպես նաև առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և սույն հարցը քննարկել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 5-8-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2024-2025 ուսումնական տարում 5-8-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) Տ-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.

4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2023 թվականի սեպտեմբերի 4-ին №113-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
բ. դասապատրաստումներին աջակցելու.
գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
2) Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:
Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար դիմում է տնօրենին՝
1) այն դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունենալու.
2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում: Զեկուցողն առաջարկեց ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկելերկարօրյա խմբերում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ պետք է դիտարկել հետ մնացող աշակերտներին, ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող

գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից ցածր արդյունքներ գրանցած աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում:

Որոշեցին՝ 1. Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

2. Ուսուցման ընթացքում դիտարկել այն աշակերտներին, որոնք ուսումնառության ընթացքում հայտորոշիչ և ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից գրանցում են ցածր արդյունքներ, նրանց կրթության կառավարման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային մատյանում տվյալ թեմաներից գնահատել 1-3 գնահատական, այսպիսով ապահովել 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու պայմանը և այդպիսով տվյալ աշակերտին ընդգրկել երկարօրյա խմբերում:

Լսեցին 11. 2024-2025 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, 2024-2025 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող հիմնական աշխատանքները, այդ աշակերտների համար պարզեցման եղանակները, ինչպես նաև կոնկրետ օրինակներով ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացումը: Զեկուցողը նշեց նաև, որ 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկին դպրոցն ունի 20 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքն անհրաժեշտ է իրականացնել հատուկ սահմանված կարգով: Զեկուցողն առանձին-առանձին անդրադարձ կատարեց բոլոր աշակերտներին և նշեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքները միշտ պատշաճ են իրականացվել ու նախորդ ուսումնական տարին էլ բացառություն չէ: Առանձնահատուկ անդրադարձ կատարվեց ծանր խնդրով աշակերտներին, որոնց հետ աշխատանքն առանձնահատուկ հմտություններ են պահանջում: Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները լրացվեն նոր կարգին համապատասխան, պարզեցումները կատարվեն հիմք ընդունելով ԿԱՊԿՈՒ աշակերտների կարողություններն ու ընդունակությունները: Սերգեյ Ավանեսյանը կարևորեց նաև դիտարկման թերթիկների լրացումը, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի ու հոգեբանի հետ համատեղ ու համագործակցային աշխատանքը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 12. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման անհրաժեշտության մասին, քանի որ դասի այս տիպերը լինում են օրինակելի, ուսուցանող, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները: Կարևորվեց նաև բաց դասերի կազմակերպումը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասայականացնել: Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների, միջոցառումների ժամանակացույցի նախագիծը:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները առաջարկեցին ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում նույնպես առաջորդվել նույն սկզբունքով և բաց դասերը, բաց դաս-դաս միջոցառումներն իրականացնել սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Որոշեցին՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Լսեցին 13. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Ավանեսյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի պահանջներին, ինչպես նաև առաջարկեց 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում դպրոցի ձևանմուշի պահանջներին համապատասխան, դրանք արձանագրել արձանագրությունների համապատասխան ձևանմուշների մեջ, իսկ կիսամյակի ավարտին դրանք սահմանված կարգով արխիվացնել:

Արտահայտվեցին՝ Շ. Հովսեփյանը, Մ. Դանիելյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների փորձը դրական է և նպատակահարմար գտան 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում նույնպես աշխատել նույն սկզբունքով:

Մերի Դանիելյանը նշեց, որ կարելի է գործածության մեջ դնել նաև դասալսման նոր գործիքը՝ ԹԻՉ-ը, քանի որ դպրոցում կան վերապատրաստված ուսուցիչներ, իսկ առաջիկայում կվերապատրաստվեն նոր ուսուցիչներ, ինչի արդյունքում դասալսման այս գործիքը կկիրառվի բոլորի կողմից կատարվող դասալսումների ժամանակ:

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհրդի ամփոփիչ նիստում:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի Ժ/Պ՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«25» սեպտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպման հետ կապված աշխատանքները: Բոլորի ուշադրությունը հրավիրեց հատկապես 5-8-րդ դասարաններում իրականացվելիք դասալսումներին, նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նախորդ ուսումնական տարվա փորձը, քանի որ իրականացված աշխատանքները փաստում են, նոր չափորոշչային դասարաններում, մի շարք դժվարություններ հաղթահարվել են դասալսումների արդյունքում վեր հանված, քննարկված հարցերի պատասխանները գտնելուց հետո: Առաջարկվեց լինել ավելի ուշադիր 6-րդ և 8-րդ դասարաններում կատարվող դասալսումների ժամանակ, իրականացնել քննարկումներ ավելի մանրամասն՝ մասնակից դարձնելով նաև մյուս ուսուցիչներին և քննարկումների ժամանակ վեր հանել առաջացած խնդիրները:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ս. Ավանեսյանը, Ա. Սարգիսջանյանը:

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց լինել ավելի ուշադիր 6-րդ և 8-րդ դասարաններում կատարվող դասալսումների ժամանակ, աջակցել ուսուցիչներին հենց այս դասարանների դասագրքերի հետ կապված ծրագրային պահանջների կատարման համար: Անհրաժեշտ համարեց, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները քննարկեն առաջացած խնդիրները և աշխատանքները կազմակերպեն ընդհանուր որոշումներ կայացնելուց հետո:

Անուշ Սարգիսջանյանը կարևորեց դասալսումների արդյունավետությունը, հատկապես կարևորելով 6-րդ և 8-րդ դասարաններում այս ուսումնական տարում ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված: Հավելեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում են կազմակերպվել աշխատանքները, այս տարի ևս շարունակել աշխատել համագործակցային սկզբունքներին հետևելով:

Լիլիթ Սարգսյանը հավելեց, որ կարևոր է համարում դասալսումների իրականացումը, քանի որ դրանց ընթացքում և՛ դասալսողը, և՛ դասալսվողը նոր մեթոդներ, հնարներ են սովորում: Սարգսյանը կարևորեց դասալսումներից հետո պարտադիր կազմակերպվող քննարկումների ընթացքում վեր հանվող խնդիրների մասին բարձրաձայնելը:

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում՝ մշակված դասալսման թերթիկի պահանջներին համապատասխան, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 5-8-րդ դասարաններում ուսումնասիրվող առարկաներին:

Լսեցին 4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ-ուսուցչի օգնական-հատուկ մանկավարժ-հոգեբան համագործակցությունը, նշեց, 2024-2025 ուսումնական տարում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Զեկուցողը հավելեց, որ կարևոր է համարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը, ներկայացրեք ուսումնական տարվա մեկնարկից սկսած ԱՈՒՊ-ների լրացման ընթացքը, նշեց, որ նոր ԱՈՒՊ-ների լրացումն աշխատատար չէ և բավականին արագ ուսուցիչները կարողանում են սահմանել իրենց նպատակները: Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց նաև ուսուցիչ-ծնող համագործակցությանը: Առաջարկեց հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ծնողների միջև՝ առաջացած հնարավոր խնդիրները լուծելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հաճախակի են հանդիպում խնդիրներ, երբ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքը որոշակի կերպով չի հաջողվում, կապված նրանց ուշ գնահատման, խնդիրների վեր հանման հետ, ինչպես նաև կախված ԿԱՊԿՈՒ աշակերտի խնդիրներից:

Հարությունյանը նշեց, որ կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը բարդ է ոչ միայն ուսուցչի, այլ նաև ուսուցչի օգնականի համար: Առաջարկեց ավելի սերտորեն համագործակցել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ, որպեսզի տվյալ աշակերտներին հնարավոր լինի հնարավորինս ավելի մասնակից դարձնել դասապրոցեսին և ապահովել ԱՈՒՊ-ով, օրվա դասի պլանով սահմանված նպատակները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն զեկույցը, ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ուսուցիչ-ուսուցչի օգնական-հոգեբան-հատուկ մանկավարժ ձևաչափով:

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության նոր կարգը: 2024-2025 ուսումնական տարվա համար մատենավարության իրականացման համար անհրաժեշտ է աշխատանքները իրականացնել նոր պահանջներին համապատասխան: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել նոր չափորոշչային դասարաններում գնահատման հետ կապված փոփոխություններին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ռ. Խաչատրյանը:

Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է գրանցումները կատարել հաստատված և ներբեռնված ՕԹՊ-ներին համապատասխան, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահին հանձնարարեց ամենաբաթյա ստուգումներ իրականացնել և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին:

Խաչատրյանը նշեց, որ անհրաժեշտ է լինել ավելի ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել ժամանակին և առաջարկեց, որ առաջացած խնդիրների դեպքում դիմեն ուսումնական մաս՝ ճիշտ խորհրդատվություն ստանալու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մատյանների ընթացիկ ստուգման արդյունքները, մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին, կազմակերպել խորհրդատվություն և աջակցել ուսուցիչներին առաջացած խնդիրների դեպքում:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի Ժ/Պ՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

«23» հոկտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. Զեկուցում՝ «Լեզվական տարածված սխալները և դրանց դեմ պայքարի եղանակները» թեմայով:
(զեկուցող՝ Ս. Հարությունյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողո առաջարկեց 5-9-րդ դասարաններում տնօրենության կողմից տալ գրավոր աշխատանքներ «Մայրենի» և «Հայոց լեզու» առարկաներից: Նշեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել առարկայական չափորոշչային պահանջները և տնօրենության կողմից բոլոր դասարաններում տալ թեստային տարբերակով գրավոր աշխատանքներ:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Լ. Սարգսյանը, Մ. Դանիելյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես 5-րդ դասարանում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքը թողնել անփոփոխ՝ թելադրություն, իսկ 6-9-րդ դասարանների համար կազմել ընտրովի առաջադրանքներով աշխատանքների մի քանի տարբերակներ:

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարում 5-9-րդ դասարաններում՝ թեստային աշխատանք:

Լսեցին 4. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման, օլիմպիադայի դպրոցական փուլի կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողն առաջարկեց ճիշտ և համակարգված կազմակերպել օլիմպիադայի դպրոցական փուլին մասնացկող աշակերտների հետ տարվող աշխատանքները: Շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ ստուգել տրված հանձնարարությունների կատարումը և ըստ մշակված պլանի շարունակել աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը նպատակահարմար է, որ իրականացնեն մեթոդմիավորման նախագահը, տվյալ առարկաների ուսուցիչները, ինչպես նաև ուսուցչի օգնականները, իսկ օլիմպիադաների հարցաշարերը նպատակահարմար է, որ կազմեն տվյալ առարկաների ուսուցիչները և ներկայացնեն ուսումնական մաս:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Ս. Ավանեսյանը, Շ. Հովսեփյանը:

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների հետ իրականացվող աշխատանքների պատշաճ իրականացումը և նշանակալի արդյունքների արձանագրումը: Նշվեց նաև տարածքային փուլին աշակերտների մասնակցության կարևորության, անհրաժեշտության մասին:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է նախապատրաստվել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին, կազմել հարցաթերթերը, հարցաշարերը:

Որոշեցին՝ Տալ հանձնարարականներ հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահին և անդամ ուսուցիչներին՝ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպել ըստ մշակված անհատական պլանի և նախապատրաստել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաթերթերն ու հարցաշարերը, ներկայացնել ուսումնական մաս: Հավանության արժանացնել օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցի նախագիծը, հանձնաժողովների, վերահսկողների կազմը (կցվում է):

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց ստուգումների արդյունքները, կարևորեց

էլեկտրոնային մատենավարության իրականացման կարգի պահպանման անհրաժեշտությունը, նշեց, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մատենավարության մեջ տեղի ունեցած փոփոխություններին: Մատենավարության հարցում անհրաժեշտ է ստանալ ճիշտ խորհրդատվություն և հետևել գնահատման կարգի մեջ կատարված փոփոխություններին: Գրանցումները կատարել ըստ ՕԹՊ-ների և թույլ չտալ շեղումներ՝ հատկապես գրավոր և գործնական աշխատանքների, ամփոփումների դեպքում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա.Սարգիսջանյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Ըստ անհրաժեշտության ժամանակին օգնություն ցույց տալ ուսուցիչներին, կատարել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ՝ մատենավարության վարման կարգի վերաբերյալ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկել Սերգեյ Ավանեսյանի հետ:

Լսեցին 6. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ Հումանիտար առարկաների ու մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, դասերի դիտարկումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 5-8-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան: Զեկուցողը նշեց, որ և օրվա դասի պլանի մեջ, և թեմատիկ պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը: Օրվա դասի պլանի գործընթացի քայլերում սահմանված էին այն քայլերը, որոնց համաձայն իրականացվում է դասապրոցեսը: Հստակ նշված էին ռեսուրսներն ու մեթոդները: Զեկուցողը նշեց, որ քանի որ օրվա թեմատիկ պլանի մեջ հստակ սահմանված է տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է:

Զեկուցողը նշեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածությանն ու գնահատման վերաբերյալ հարցերին: Աշակերտների ներգրավվածությանն հետ զեկուցողը նշեց, որ խնդիրը հիմնականում կապված է այն աշակերտների հետ, որոնք հետ են մնում, շեշտեց, որ այդ աշակերտներն ընդգրկվում են երկարօրյա խմբերում: ԿԱՊԿՈՒ աշակերտների ամբողջական ներգրավվումը դասապրոցեսին իրականացվում է հիմնականում ուսուցչի օգնականների օգնությամբ և նրանց համար սահմանված ԱՈՒՊ-ների համաձայն:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նախորդ տարվա փորձը, որը թույլ կտա իրագործել գնահատման նոր համակարգի պահանջները, որի արդյունքում կարելի է կիրառել այն ամբողջ գործիքակազմը, որն ընձեռում է հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատումները:

Զեկուցողն առաջարկեց ուշադրություն դարձնել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին և այս ուղղություններով կազմակերպել քննարկումներ։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում քննարկումներ կազմակերպել՝ ունեցած գիտելիքները բարելավելու, թարմացնելու ուղղությամբ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուցումը։ ՄՄ նիստերի ընթացքում իրականացնել քննարկումներ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգի շուրջ։

Լսեցին 7. «Լեզվական տարածված սխալները և դրանց դեմ պայքարի եղանակները» թեմայով զեկուցման մասին։

(զեկուցող՝ Ս.Հարությունյան)

Զեկուցողը նշեց, որ թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ մշտապես արդիական է, քանի որ անխուսափելի են խոսքային վթարները հաղորդակցման ընթացքում։ Եվ քանի որ մշտական արծարծված թեմա են լեզվական սխալների դեմ պայքարի միջոցներն ու եղանակները, ինքս էլ բազմիցս մտորելու առիթ եմ ունեցել՝ ինչպես կարելի է փոքրիշատե նվազեցնել լեզվական թերությունները։

Զեկուցողը ներկայացրեց, որ լեզվական առավել տարածված սխալները դասակարգել է ըստ գործածության շրջանակների՝

- ԶԼՄ-ներում
- Առօրյա խոսակցական լեզվում
- Հեռուստատեսությամբ
- Սոցիալական կայքերում
- Գրավոր խոսքում։

Երկբայելի է՝ արդյոք բանավոր խոսքի՞ց են վերոնշյալ մակարդակների փոխանցվում լեզվական սխալները, թե՞, ընդհակառակը, հեռուստացույցից կամ ԶԼՄ-ներից են անցնում մարդկային հաղորդակցման լեզվին։

Մի բան պարզ է՝ որ լեզվական սխալների մասին բազմիցս բարձրաձայնվում է, Լեզվի կոմիտեի կողմից տարվում է պատշաճ գործունեություն՝ հորդորակների, լեզվական տարաբնույթ խաղերի, թեստերի և այլնի միջոցով,սակայն լեզվական սխալների առկա պատկերը կարծես քիչ է հուսադրող. նույն լատինատառ կիսագրագետ հայերեն հաղորդագրությունները, թերություններով լեցուն հայատառ գրությունները սոցկայքերում, որ ոչ միայն զայրույթ ու հիասթափություն են առաջ բերում, այլև ամոթ հայի՝ սեփական լեզվի հանդեպ այդչափ անհարգալից վերաբերմունքի։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ա. Սարգիսջանյանը։

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաճախադեպ հանդես գալ նման զեկուցումներով՝ թե գիտական, թե մասնագիտական, թե մանկավարժամեթոդական թեմաներով։ Զեկուցման մեջ արծարծված խնդիրները արդիական են և մտահոգիչ։

Անհրաժեշտ է կիրառել բոլոր հնարավորությունները խնդրի լուծման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Լեզվական տարածված սխալները և դրանց դեմ

պայքարի եղանակները» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է)։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի Ժ/Պ՝ _____ Ս. Ավանեսյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«27» նոյեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ռեսուրս կաբինետի աշխատակիցները

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն, ընթացիկ աշխատանքների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին։
(զեկուցող՝Մ.Դանիելյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության, ընթացիկ աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ հատուկ մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականների հետ անհրաժեշտ է կազմակերպել ամենօրյա քննարկումներ, ուսումնական պրոցեսում կարևոր է վերլուծություններ կատարել և առաջացած խնդիրները քննարկել հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականի և հոգեբանի մասնակցությամբ: Նշվեց անհատական աշխատանքի կարևորության մասին: Զեկուցողը ներկայացրեց նաև նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվում են սահմանված պահանջներին համապատասխան: Հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, շեշտեց, որ ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում է նաև տնօրինությունը:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Ավանեսյանը, Հ. Տատինցյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է և շատ կարևոր հաշվի առնել երեխաների տարիքային փոփոխությունները, քանի որ վարքի փոփոխությունները ևս պայմանավորված են ավելի շատ տարիքային առանձնահատկություններով, կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը: Արտահայտվողները կարևորեցին ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող Մ.Դանիելյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյանների ստուգման մասին ինֆորմացիան, խոսեց արձանագրված բացթողումների մասին: Ներկաների ուշադրությունը հրավիրեց ամփոփումների, գործնական աշխատանքների գնահատականների ժամանակին էլեկտրոնային մատյան փոխանցելու վրա:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Ավանեսյանը կարևորվեց յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու վերաբերմունքի անհրաժեշտությունը մատենավարության գործում: Նշեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրվում են թերություններ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

Լսեցին 5. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը նշեց փոխադարձ դասալսումների կարևորության մասին, ուսուցիչների միջև համագործակցային մթնոլորտի ձևավորման անհրաժեշտության մասին: Կարևորվեց այն հանգամանքը, որ ուսուցիչները պետք է հնարավոր բոլոր միջոցները կիրառեն, որպեսզի կարողանան նպաստել աշակերտների հետաքրքրությունների ձևավորմանը, ինքնուրույն մտածողության, վերլուծական կարողությունների զարգացմանը: Զեկուցողը ներկայացրեց և անհրաժեշտ համարեց յուրաքանչյուր դասալսումից հետո

կազմակերպել քննարկում՝ մ/մ ուսուցիչների մասնակցությամբ, օգնել ուսուցիչներին միջոցներ ձեռնարկել դասի արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների ինքնուրույն կարողությունների և հմտությունների զարգացումը ապահովելու համար: Հիշեցրեց, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել նոր ՀՊՉ-ների ներդրման գործնական գործընթացին և շարունակել 5-8-րդ դասարաններում դասալսումների կազմակերպման և քննարկման ընթացքում նկատված հարցերի ու խնդիրների շուրջ կազմակերպվող քննարկումներին:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Շ.Հովսեփյանը:

Արտահայտվողները նշեցին, որ յուրաքանչյուր դասից վերցրած նորը անհարաժեշտ է դարձնել սեփականը, ավելացնել արդիականը և արդյունավետ ուղիներ փնտրելու արդյունքում հասնել առարկայական նպատակների և վերջնարդյունքների կատարմանը:

Շահանե Հովսեփյանը նշեց, որ պետք է շարունակել աշխատանքները, որոնք ուղղված են աշակերտների բանավոր գրագետ, ճիշտ խոսելու կարողությունների զարգացմանը, չմոռանալով նաև ուղղագրական խնդիրների մասին:

Արտահայտվողները նշեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին:

Ռուզաննա Խաչատրյանը նշեց, որ դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև այլ մ/մ ուսուցիչների հետ:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«24» դեկտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, ԴԱԿ Արմինե Հարությունյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
10. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
11. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց նախորդ տարվա փորձը, ներկայացրեց տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները «Հայոց լեզու» («Մայրենի») առարկայից: Արաքսյա Առստամյանը նշեց արդյունքների քննարկման անհրաժեշտության ու վերլուծության կարևորություն մասին, կարևորեց աշակերտների կողմից ինքնուրույն աշխատելու փորձը և ուսուցիչների կողմից գրավորների ստուգման մեթոդները, քանի որ անկողմնակալ մոտեցումը թույլ է տալիս պարզել եղած դժվարություններն ու խնդիրները:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Շ.Հովսեփյանը:

Արտահայտվողները անհրաժեշտ համարեցին՝ լեզվի իմացության մակարդակի բարձրացման հարցում կիրառել այնպիսի հնարներ ու մեթոդներ, որոնք միտված կլինեն ոչ միայն դասի արդյունավետության բարձրացմանը, այլ նաև աշակերտների ինքնուրույն և առանց աջակցության աշխատելու կարողությունների զարգացմանը:

Հարությունյանը նշեց, որ անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել ամբողջ տարվա ընթացքում և կարևորեց տարբեր տեսակի գրավոր աշխատանքների միջոցով ուղղագրության, կետադրության և լեզվական հմտությունների սովորեցումն ու թեստերի հետ աշխատանքներ իրականացնելու հմտությունների զարգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն ըստ ժամանակացույցի մեկնարկել է 2024 թվականի դեկտեմբերի 18-ին: Զեկուցողը ներկայացրեց առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպման համար իրականացված աշխատանքները, կարևորեց դպրոցական փուլի արդար անցկացումը:

Զեկուցողը ներկայացրեց նաև առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման նոր կարգը, քանի որ առաջին անգամ առաջադրանքները կազմել են ոչ թե ուսուցիչները, այլ պատրաստի տարբերակները ուղարկվել են դպրոցներ: Զեկուցողը նշեց նաև, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի մեկնարկը տրվել է առաջին կիսամյակում, կշարունակվի երկրորդ կիսամյակում:

Բոլորի ուշադրությունը հրավիրվեց առարկայական օլիմպիադաների անցկացման նոր կարգի վրա, ըստ որի հումանիտար առարկաների և օտար լեզուների օլիմպիադաները (հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն, ՆԶՊ, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն) նույնպես այսուհետ անցկացվելու են նոր սկզբունքով, որը նման է բնագիտամաթեմատիկական առարկաների օլիմպիադաների անցկացմանը և պատասխանների թերթիկների օգնությամբ:

Զեկուցողը կարևորեց նաև օլիմպիադայի մասնակիցների ընտրության հարցում փոփոխված պահանջներին հետևելը:

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է անվավեր համարել մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումը, համապատասխան որի սահմանվել էր դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի ժամանակացույցը, հաստատվել էին թեստերը:

Արտահայտվեցին՝ Ս.Հարությունյանը, Ա.Սարգիսջանյանը:

Սոնա Հարությունյանը կարևորեց օլիմպիադայի դպրոցական փուլի արդար և անկողմնակալ կազմակերպումը, շեշտեց, որ արդեն քանի տարի է օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը գրեթե չի տարբերվում տարածքային, մարզային փուլերից, ինչպես նաև ողջունեց նոր կարգին անցումը:

Անուշ Սարգիսջանյանը կարևոր համարեց կատարված փոփոխություններն ու դրանց հետևողականորեն հետևելու անհրաժտությունը: Կարևորեց այն սկզբունքը, որի համաձայն օլիմպիադայի ընթացքը վերահսկում են ոչ մասնագետները:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի փոփոխություններն ու նոր կարգը:
2. Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հանձնաժողովների, կազմկոմիտեների կազմերը, ժամանակացույցը (կցվում է):
3. Անվավեր ճանաչել համարել մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումը նախկին սկզբունքով դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացման մասին:

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում գրավոր աշխատանքները տրվել են հաստատված քանակին և տեսակին համապատասխան՝ ըստ ՕԹՊ-ների: Հավելեց, որ տրված ամփոփիչ գրավոր աշխատանքները պետք է համապատասխանեն ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և տրված ամփոփիչ աշխատանքների քանակին, ըստ որի էլ պետք է իրականացված լինի աշակերտների գնահատումը, ինչպես նաև կարևորվեց ՕԹՊ-ների կատարողականը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ս. Հարությունյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նոր չափորոշչային դասարաններում ամփոփիչ աշխատանքներ հանձնարարելիս պետք է ուշադրություն դարձնել

չափորոշիչների պահանջներին, կարևորեց, որ ամփոփիչ աշխատանքները տրված լինեն ըստ ՕԹՊ-ների և հավելեց, որ 2024-2025 ուսումնական տարվանից սկսած մեթոդական միավորումներում հաստատվում են ամփոփիչ աշխատանքների և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակները, որոնց համապատասխան ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները պետք է իրականացնեն այդ աշխատանքները:
Սոնա Հարությունյանն անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս ուշադրություն դարձնել ամփոփիչ աշխատանքների համապատասխանությանը ՕԹՊ-ներին, որպեսզի էլեկտրոնային մատյաններում գրանցումները ևս ճիշտ կատարվեն: Նշվեց, որ ուսուցիչը կարող է ստեղծագործաբար մոտենալ նաև գործնական աշխատանքի բնույթի ընտրությանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել ստուգումներ ամփոփումների, ամփոփիչ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված:

Լսեցին 6. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների մասին ինֆորմացիան: Նշեց, որ անհրաժեշտ է հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ, դիտարկումներ, վեր հանել թերությունները, դրանք շտկելու համար համապատասխան միջոցներ ձեռնարկել: Զեկուցողը ներկայացրեց 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները: Քննարկվեց նաև բաց դասերին և դաս-միջոցառումներին ուսուցիչների մասնակցության և արդյունքների քննարկման մասին հարցերը:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ա. Սարգիսջանյանը, Ա. Առստամյանը:

Արտահայտվողները կարևորեցին դասապրոցեսի ընթացքում ճիշտ մեթոդների և հնարների կիրառումը, նշվեց, որ դրանք պետք է լինեն նպատակային, տեղին և ներգրավեն բոլոր աշակերտներին: Կարևորվեց դասալսումների ընթացքում համագործակցային մոտեցումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Արտահայտվողները կարևոր համարեցին արդյունքների ամփոփման ժամանակ ուսուցիչների կողմից ցուցաբերված մոտեցումները, առաջարկները և վեր հանված խնդիրների քննարկման եղանակները:
Արաքսյա Առստամյանը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվանից սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրվում են նոր սկզբունքով մշակված հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները: Առստամյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը համապատասխանում է կարգի նոր պահանջներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 7. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի

ընթացքում իրականացվել է 9 նախագծային աշխատանք, որից.

- 6 նախագծային աշխատանք իրականացվել է 7-րդ դասարաններում, որից 2-ը՝ ներառարկայական, 4-ը՝ միջառարկայական: 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում 7-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Քիմիա», «Հայաստանի պատմություն», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Աշխարհագրություն» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:
- 3 նախագծային աշխատանք իրականացվել է 8-րդ դասարաններում, որից 1-ը՝ ներառարկայական, 2-ը՝ միջառարկայական: 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում 8-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆիզկուլտուրա», «ԹԳՀԳ», «Կենսաբանություն», «Անգլերեն» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:

Հիմք ընդունելով Հանրակրթական հիմնական ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը, մեթոդմիավորման որոշումն ու մանկավարժական խորհրդի որոշումը, նախագծային աշխատանքների պաշտպանություններն իրականացվել են առարկայական հանձնաժողովներով, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, ուսումնական գծով տնօրենի տեղակալը: Զեկուցողը հավելեց, որ կարգի համաձայն բոլոր նախագծերն ու պրոդուկտները հրապարակվել են դպրոցի կայքում, որտեղ դրանց համար ստեղծվել է առանձին էջ:

Արտահայտվեցին՝ Նախագծային աշխատանքների ղեկավարները

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, պրոդուկտները, իրականացման ընթացքում առաջացած խնդիրները, ձեռքբերումները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 8. 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատյանում արձանագրված բացթողումները, նշեց, որ անհրաժեշտ է խստիվ հետևել գնահատման համակարգում կատարված փոփոխություններին, 5-8-րդ դասարաններում գնահատել բացառապես թեմաների ամփոփումների ժամանակ:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Շ. Հովսեփյանը

Արտահայտվողները նշեցին, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա աշխատանքները՝ կապված մատենավարության հետ, հորդորեցին լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-ներից, լինել հետևողական՝ աշխատանքը կատարելուց հետո կրկին ստուգել մատյանը, իսկ խնդիրների դեպքում համագործակցել մ/մ նախագահի, ուսումնական մասի ղեկավարի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետների հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի

էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 9 Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում Հումանիտար առարկաներկաների մեթոդմիավորման ժամաբաժանման փոփոխությունները «Հայոց պատմություն», «Հանրահաշիվ» առարկաների հետ կապված: Նշեց, որ 9-րդ դասարաններում «Հայոց պատմություն» առարկայի 2 դասաժամից 1-ը փոխանցվում է «Հանրահաշիվ» առարկային, ինչի արդյունքում «Հայոց պատմություն» առարկան ունենում է 1 դասաժամ, իսկ «Հանրահաշիվ» առարկան՝ 4 դասաժամ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավաանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելու ժամանակ, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարվա մեկնարկին ևս քննարկվել է փոփոխությունների մասին հարցը: Նշվել են բոլոր այն փոփոխությունները, որոնք սահմանված են օրինակելի ուսումնական պլանով և այդպիսով կատարվել է սահմանված պահանջը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է):

Լսեցին 10 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան: Հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները, շեշտեց, որ ըստ սահմանված կարգի երկու ամիսը մեկ անգամ իրականացվում են քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ, որին մասնակցում են նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանն ու տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ, որոնց ընթացքում արձանագրվել է, որ 5-8-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող

ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները, օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, մատենավարությունը կազմակերպված էր օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան։ Զեկուցողը նշեց, որ օրացուցային-թեմատիկ պլանների մեջ ըստ պահանջի սահմանված էին տվյալ թեմայի նպատակը, վերջնարդյունքը։ Միևնույն ժամանակ զեկուցողը նշեց, որ որոշակի խնդիրներ շարունակվում են նկատվել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հետ կապված հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է և հնարավոր չի լինում բոլոր աշակերտների մոտ հավասարաչափ իրականացնել կարողությունների զարգացում։ Աշակերտների մեծ թվաքանակի հետ կապված նաև ուսուցիչները դժվարանում են բոլոր աշակերտներին հավասարապես ներառել դասապրոցեսին, ավելի շատ ուշադրություն դարձնել նրանց կողմից ինքնուրույն աշխատանքների իրականացմանը։ Զեկուցողը նշեց, որ քանի որ ՕԹՊ-ների մեջ հստակ սահմանված են տվյալ օրվա թեմայի վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են պատկերացնել, թե դասի ավարտին ինչ վերջնարդյունքներ պետք է ապահովեն, ինչն ուսուցիչների մոտ հաջողվում է, եթե դասարանում աշակերտների խտությունը մեծ չէ։

Զեկուցողը, ինչպես նախորդիվ, այս անգամ նույնպես բոլորի ուշադրությունը հրավիրեց գնահատման հետ կապված հարցերին, նշեց, որ հիմնականում բացթողում է նկատում գնահատման դեպքում։ Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, կատարում են սահմանված պահանջները, աշակերտները գնահատվում են բացառապես ամփոփումների ժամանակ։

Զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, տվյալ թեմայի վերջնարդյունքների զարգացման, ուսումնական գործընթացում աշակերտների ներգրավվածության, ինչպես նաև գնահատման նոր համակարգին վերաբերող հարցերը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ համակարծիք են զեկուցողի դիտարկումների հետ, հավելեցին, որ անհրաժեշտ են համարում կիրառել այն ուսուցիչների փորձը, որոնք նախորդ ուսումնական տարվա ընթացքում աշխատել են 5-րդ և 7-րդ դասարաններում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6

«30» հունվարի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկաների դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Դպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. ԱՈՒՊ-ներ, դիտարկման թերթիկներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. Մանկավարժական զեկուցում՝ «Գոյականի հոլովները» թեմայով:
(զեկուցող՝ Շ. Հովսեփյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման դեկտեմբեր ամսվա օրակարգի կատարողականը: Ամփոփեց մեթոդմիավորման նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները կատարվել են:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողները նշեցին քննարկված հարցերի կարևորության ու անհրաժեշտության մասին: Կատարված դասալսումների արդյունքների քննարկումները, դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպումը, ծրագրերի կատարողականի ստուգումները, էլեկտրոնային մատենավարության ստուգումների վերլուծությունը, տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների քննարկումներն ու վերլուծությունները հնարավորություն են տալիս առաջացած խնդիրները ժամանակին նկատել և աշխատանքներ տանել շտկելու, վերացնելու համար:

Որոշեցին՝ Ուշադրություն դարձնել նախորդ մեթոդմիավորման նիստերի ժամանակ արձանագրված կետերի քննարկումներին, բացթողումները շտկել ժամանակին:

Լսեցին 3. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց նոր չափորոշիչների ներդրման ընթացքում նախորդող ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրները, նշեց, որ որոշման համաձայն վերահսկողության արդյունքները պետք է քննարկվեն հաճախակի, միևնույն ժամանակ հավելեց. քանի որ ընթացքում ուսուցիչների մոտ հարցեր են առաջանում, ապա անհրաժեշտ է համարում այս նիստի ընթացքում նույնպես քննարկել նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված հարցերը և ընդունել որոշումներ՝ հետագա աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար: Զեկուցողը նաև կարևորեց 5-8-րդ դասարաններում կատարված դասալսումների և քննարկումների արդյունքում բարձրաձայնվող հարցերի շուրջ տրվող պարզաբանումները: Զեկուցողն առաջարկեց կիրառել 5-րդ և 7-րդ դասարաններում նախորդ տարի ներդրված ՀՊՉ-ների ներդրման գործընթացը, քանի որ շատ հարցերում նախորդ տարվա փորձի կիրառումը արդյունավետ է և օգտակար:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը

Մերի Դանիելյանը նշեց, որ նոր չափորոշչային դասարաններում խնդիրներ հիմնականում լինում են գնահատման նոր սկզբունքների հետ կապված, սակայն դրանք ի տարբերություն նախորդ ուսումնական տարվա շատ քիչ են և էական ազդեցություն չեն թողնում ընդհանուր պատկերի վրա: Գնահատման նոր սկզբունքների շուրջ տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի կողմից իրականացված քննարկումների, պարզաբանումների արդյունքում շտկվել են բոլոր այն բացթողումները, որոնք արձանագրվել էին նախորդ ուսումնական տարվա ընթացքում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից կատարված աշխատանքները մատենավարության հետ կապված: Հետևողական վերահսկողության արդյունքում հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների մոտ կտրուկ նվազել են բացթողումները: Մերի Դանիելյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում մատենավարության խնդիրները տեխնիկական բնույթ ունեին՝ կապված թեմատիկ պլանների ներբեռնման հետ:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական աշխատանքներն օգնում են ուսուցիչներին բարելավել իրենց կարողությունները էլեկտրոնային

մատենավարության հարցում:
Արտահայտվողների կողմից կարևորվեց ամենօրյա գրանցումների կատարումը, քանի որ այդ դեպքում նվազում է անճշտություններ թույլ տալու հավանականությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը, շարունակել վերահսկողությունը:

Լսեցին 5. 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ փետրվար ամսվա ընթացքում 7-9-րդ դասարաններում կիրականացվի «Գրականություն» առարկայի ուսումնասիրություն, որի նպատակն է ծանոթանալ աշակերտների գիտելիքների մակարդակին և աջակցել ուսուցիչներին առկա խնդիրների լուծման և դասի արդյունավետության բարձրացման հարցերի շուրջ:

Արտահայտվեցին՝ Սոնա Հարությունյանը, Արաքսյա Առուստամյանը

Արտահայտվողները նշեցին, որ «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների հետ, այլ ցանկալի է ընդգրկել նաև այլ մեթոդմիավորման ուսուցիչների:

Արաքսյա Առուստամյանը նշեց, որ մեծ ուշադրություն պետք է դարձնել դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությանը, և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը, բանավոր խոսքի զարգացմանը:

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «Գրականություն» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Լսեցին 6. Դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպման, անցկացման և արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց 5-9-րդ դասարաններում հումանիտար առարկաներից օլիմպիադաների կազմակերպումը, շեշտեց, որ 2024-2025 ուսումնական տարում առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլն իրականացվել է նոր սկզբունքով, այնպես, ինչպես իրականացվում է բնագիտամաթեմատիկական առարկաների օլիմպիադան: Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում հումանիտար առարկաներից Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցն արդյունքներ չի գրանցել:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ 2024-2025 ուսումնական տարում դպրոցի աշակերտները հումանիտար առարկաներից ցավոք արդյունքներ չեն գրանցել: Շեշտեցին, որ անհրաժեշտ է աշխատել ընթացիկ ուսումնական տարվա 8-րդ դասարանների աշակերտների հետ, որպեսզի 2025-2026 ուսումնական տարում հնարավոր լինի ապահովել պատշաճ մասնակցություն և արդյունք:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպման, անցկացման և արդյունքների քննարկման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 7. ԱՈԻՊ-ների, դիտարկման թերթիկների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, ինչպես նաև դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան, շեշտեց, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմ համագործակցությունը, ՕԴՊ-ով սահմանված նպատակների իրագործումը՝ ԱՈՒՊ-ի շրջանակներում և դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը:

Լսեցին 8. Մանկավարժական զեկուցում՝ «Գոյականի հոլովները» թեմայով:

(զեկուցող՝ Շ. Հովսեփյան)

Զեկուցողը հանգամանալից ներկայացրեց թեման, խոսեց թեմայի արդիականության մասին, շեշտելով արդի աշխարհում տեխնիկայի և գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջև: Ահա հենց այդ պատճառով էլ, շատ կարևոր է հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի ուսումնառությունը: Մայրենի լեզվի ուսումնառության գլխավոր շեշտադրումներից մեկը պիտի լինի գրական լեզվի նորմերին տիրապետելը և արդյունավետ բանավոր հաղորդակցություն ունենալը: Գեղեցիկ և գրագետ խոսք ունենալու համար աշակերտները պետք է կարողանան տարբերակել գոյականի հոլովները, կատարել հոլովումներ և խոսքի մեջ օգտագործել ձևաբանորեն ճիշտ կառուցված բառեր: Այդ հմտությունների միջոցով կկառուցվի ճիշտ բանավոր խոսք և գրագետ հաղորդակցութուն:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ թեման կարևոր է, որի շրջանակում անդրադարձ է կատարվում գոյականի հոլովի քերականական կարգին, ուսումնասիրվում է հոլովների համակարգը, ինչպես նաև տվյալ թեմայի դասավանդմանը դպրոցում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Գոյականի հոլովները» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

«27» փետրվարի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝
1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Էսսե գրելու անհրաժեշտության և դժվարությունների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. ՕԹՊ-ների փոփոխության մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. 7-9-րդ դասարաններում առարկայափնջերով թեստային գրավոր աշխատանքների հանձնարարման մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ,

սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը առաջարկեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում 5-6-րդ դասարաններում «Մայրենի», 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային եղանակով: Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու սկզբունքները, խոսեց այն մասին, որ աշակերտներն աշխատելու են թղթերի վրա, սակայն արդյունքները փոխանցելու են էլեկտրոնային տարբերակով կազմված թեստերի մեջ: Նշեց, որ թեստերը կազմված են լինելու 10 հարցից, որոնցից յուրաքանչյուրն ունենալու է 1 միավորի կշիռ: Թեստերի հարցերից յուրաքանչյուրն ունենալու է ճիշտ և սխալ պատասխաններ, որոնցից աշակերտը պետք է ընտրություն կատարի: Աշխատանքն ամփոփելուց հետո, երբ աշակերտը սեղմի ուղարկել կոճակը, կարող է տեսնել գրավոր աշխատանքի արդյունքը: Զեկուցողը նշեց նաև, որ 5-րդ դասարաններում փորձնական եղանակով այս սկզբունքով տրվել են գրավոր աշխատանքներ և աշակերտները մեծ ոգևորությամբ իրականացրել աշխատանքը:

Արտահայտվեցին՝ Սոնա Հարությունյանը, Լիլիթ Սարգսյանը

Արտահայտվողները նշեցին, որ էլեկտրոնային տարբերակով տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ գրելը դպրոցում նորություն է, սակայն շեշտեցին, որ իսկապես աշակերտները փորձնական տարբերակի վրա մեծ ոգևորությամբ են աշխատել: Նշեցին, որ դրանում իր ազդեցությունն է թողել նաև այն հանգամանքը, որ աշակերտները հնարավորություն են ստանում անմիջապես տեղում տեսնել իրենց աշխատանքի արդյունքները:

Որոշեցին՝ 1. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային տարբերակով:

2. Թեստերը կազմել քննարկված պահանջներին համապատասխան:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ ի տարբերություն նախորդ ուսումնական տարիների, 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատյաններում արձանագրված թերություններն անհամեմատ քիչ են և ոչ բոլոր ուսուցիչների մոտ են նկատվում:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքի բարեխիղճ կատարումը, նշեց, որ միշտ պատրաստ է աջակցել ուսուցիչներին արձանագրված թերությունները, բացթողումները շտկելու ուղղությամբ: Կարևորեց, որ մատենավարությունը կազմակերպվի թեմատիկ հաջորդականությանը համապատասխան և շեշտեց, որ համաձայն է զեկուցողի հետ, որ 2024-2025 ուսումնական տարում բացթողումներն անհամեմատ քիչ են, իսկ վարչական միջամտություններ առհասարակ չեն կատարվել:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Պարբերաբար

իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 5. 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ փետրվար ամսվա ընթացքում 7-9-րդ դասարաններում իրականացվել է «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրություն: Ամբողջ ամսվա ընթացքում ինտենսիվ կերպով իրականացվել են դասալսումներ: Քննարկումներին և դասալսումներին մասնակցել են ՄՄ նախագահը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, տնօրենի ժ/պ Սերգեյ Ավանեսյանը և հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչներ: Զեկուցողը նշեց, որ դասալսումների ժամանակ ականատես են եղել ինչպես հաջողված, օրինակելի այնպես էլ բավականին թերություններով ու անհաջող դասապրոցեսների: Դասալսումների նպատակն էր ծանոթանալ աշակերտների գիտելիքների մակարդակին և աջակցել ուսուցիչներին առկա խնդիրների լուծման և դասի արդյունավետության բարձրացման հարցերի շուրջ: Զեկուցողը կարևորեց փորձառու և երիտասարդ գործընկերների համագործակցությունը, շեշտեց ՕԹՊ-ների և դասապրոցեսի համապատասխանության պահպանման կարևորության մասին:

Զեկուցողը հավելեց, որ որպես դրվածքի ամփոփում 7-9-րդ դասարաններում նախատեսվում է տալ փնջային գրավոր աշխատանքներ՝ «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Ս. Ավանեսյանը, Ա.Առստամյանը:

Արտահայտվողները նշեցին, որ «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտ է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների հետ, այլ ցանկալի է նաև ընդգրկել այլ մեթոդմիավորման ուսուցիչների:

Արաքսյա Առստամյանը կարևորեց աշակերտների բանավոր խոսքի հետ կապված թերությունների ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ մեծ ուշադրություն պետք է դարձնել դասապրոցեսի ժամանակ աշակերտների մասնակցությանը, և աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 7-9-րդ դասարաններում «Գրականություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 6. Էսսե գրելու անհրաժեշտության և դժվարությունների հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի հունվար ամսին ԿԶՆԱԿ-ի կողմից դպրոց ուղարկած շրջաբերականը լուրջ աշխատելու նախապայման դարձավ: Անհրաժեշտ էր 7-րդ դասարաններում երեխաներին հանձնարարել էսսե գրել «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից՝ արդեն նախապես ընտրված թեմաներից:

Կարևորվեց ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին, քանի որ յուրաքանչյուր մասնակցություն ապահովեց մի շարք անհասկանալի հարցերի պատասխաններ: Զեկուցողը կարևորեց նաև ուսուցիչների կողմից

կատարված հսկայական աշխատանքը: Խնդիրը այն էր, որ նախ և առաջ ուսուցիչները պետք է սովորեին էսսե գրել, հետո սովորեցնեին աշակերտներին:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Մ. Դանիելյանը

Արտահայտվողները կարևորեցին էսսե գրելու հմտությունների ձեռք բերմանն ուղղված աշխատանքները, բայց նշեցին նաև ժամանակի սղության մասին: Երեխաներին այդ հմտությունները փոխանցելու, սովորեցնելու համար անհրաժեշտ ժամանակ չկար, իսկ ներկայացված պահանջներն ու արդյունավետ համագործակցության համար ուսուցիչները ստիպված աշխատեցին լրացուցիչ:

Սոնա Հարությունյանը նշեց, որ լավ աշխատանքներ ունենալու համար պահանջվում է հետևողական աշխատանք, իսկ այդ արդյունքներն ունենալու համար նախ և առաջ անհրաժեշտ է դեռևս սովորել, տրամադրել դասաժամեր, որպեսզի երեխաներն ընկալեն և սովորեն էսսե գրելու հմտություններն ու կարողությունները

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն էսսե գրելու անհրաժեշտության և դժվարությունների հետ կապված հարցերի քննարկման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 7. ՕԹՊ-ների փոփոխության մասին:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի 2025 թվականի փետրվարի 21-ին գրության համաձայն եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով հանրապետության դպրոցներում դասերը չեղարկվել են՝ կիսամյակի ընթացքում լրացնելու պայմանով: Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ և տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի հարամանով փետրվարի 21-ի դասերը տեղափոխվել են 2025 թվականի մարտի 1-ը: Այս ամենի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել ժամկետների փոփոխություն կատարել ՕԹՊ-ներում և խիստ հետևել կատարված փոփոխություններին՝ էլեկտրոնային մատենավարության աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է նախատեսվող փոփոխությունները սեղմ ժամկետներում իրականացնել, որպեսզի մատենավարության ընթացքում բացթողումներ և սխալներ չառաջանան:

Որոշեցին՝ ՕԹՊ-ների փոփոխության մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 8. 7-9-րդ դասարաններում առարկայափնջերով թեստային գրավոր աշխատանքների հանձնարարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ վերջին տարիներին հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվող բարեփոխումների, նոր ՀՊՉ-ների և ծրագրերի ներդրման պահանջների հետ կապված առաջարկվում է 7-9-րդ դասարաններում առարկայափնջերով թեստային գրավոր աշխատանքներ հանձնարարել: Այս նախաձեռնությամբ նախատեսվում է առարկայական գիտելիքի ստուգումն իրականացնել հետևյալ առարկայափնջերով.

- Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսաց լեզու (8-րդ դասարան),
- Երաժշտություն, Կերպարվեստ (7-րդ դասարան),
- Ֆիզիկա, Քիմիա, Աշխարհագրություն, Կենսաբանություն, ԹԳՀԳ (7-8-րդ դասարան),
- Գրականություն, Հայաստանի պատմություն (7-9-րդ դասարան):

Զեկուցողը առաջարկեց, գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝

էլեկտրոնային եղանակով: Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու սկզբունքները, խոսեց այն մասին, որ աշակերտներն աշխատելու են թղթերի վրա, սակայն արդյունքները փոխանցելու են էլեկտրոնային տարբերակով կազմված թեստերի մեջ: Նշեց, որ թեստերը կազմված են լինելու յուրաքանչյուր առարկայից 10 հարցից, որոնցից յուրաքանչյուրն ունենալու է 1 միավորի կշիռ: Թեստերի հարցերից յուրաքանչյուրն ունենալու է ճիշտ և սխալ պատասխաններ, որոնցից աշակերտը պետք է ընտրություն կատարի: Աշխատանքն ամփոփելուց հետո, երբ աշակերտը սեղմի ուղարկել կոճակը, կարող է տեսնել գրավոր աշխատանքի արդյունքը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվող ուսումնական առարկաների դրվածքի ուսումնասիրության արդյունքներն ամփոփ ներկայացնելու համար և փաստացի եզրահանգումներ կատարելու համար նպատակահարմար է տնօրենության կողմից իրականացվող գնահատման այս եղանակը: Ամփոփիչ գրավոր աշխատանքների այս ձևաչափը ողջունելի է նաև այն իմաստով, որ այն կբարձրացնի սովորողների պատասխանատվության զգացումը և խթանիչ հանգամանք կհանդիսանա կրթության որակի բարելավման համար:

Որոշեցին՝ 7-9-րդ դասարաններում առարկայափնջերով տալ թեստային գրավոր աշխատանքներ՝ հետևյալ առարկաներից.

- Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսաց լեզու (8-րդ դասարան),
- Երաժշտություն, Կերպարվեստ (7-րդ դասարան),
- Ֆիզիկա, Քիմիա, Աշխարհագրություն, Կենսաբանություն, ԹԳՀԳ (7-8-րդ դասարան),
- Գրականություն, Հայաստանի պատմություն (7-9-րդ դասարան):

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

«26» մարտի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. ՕԴՊ-ների հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 5-րդ և 7-րդ դասարանների սովորողների ընթերցողական որակների ստուգման նպատակով իրականացված հետազոտության մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Էլեկտրոնային մատենավարության ընթացիկ ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. Զեկուցում «Դարձվածային միավորները ժամանակակից հայերենում (Խ. Աբովյանի Վերք Հայաստանի վեպի օրինակով)» թեմայով:
(զեկուցող՝ Լ. Սարգսյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. ՕԴՊ-ների հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ matyan.emis.am համակարգի թեմատիկ պլանների բաժնում արդեն հասանելի են նոր «Դասի ընդլայնված պլան (տարակարգի համար)» և «Գործողություն» հատվածները։ Ավելի վաղ մատյանում ավելացել էր նաև դասի նպատակի և վերջնարդյունքի հատվածները։ Էլեկտրոնային մատյանում այս 4 հատվածների ավելացումն ուսուցիչներին հնարավորություն է տալիս անմիջապես համակարգում լրացնել դասի պլանը և լրացուցիչ աշխատանք չկատարել։ Համակարգում դասի պլանի մեջ դասի նպատակը, վերջնարդյունքը, խնդիրները լրացվում են ինքնաշխատ եղանակով՝ թեմատիկ պլաններից համապատասխան մասերը ներբեռնվում են դասի պլանի մեջ, իսկ «Դասի ընդլայնված պլան (տարակարգի համար)» և «Գործողություն» հատվածներն ուսուցիչները պետք է ըստ անհրաժեշտության լրացնեն, ինչը հնարավորություն է տալիս լրացումները պահպանել նաև հաջորդ ուսումնական տարիների համար, սակայն շեշտեց, որ համակարգում այս պահին առկա են որոշ խնդիրներ և այն որոշակի կերպով խառնում է գրվածքը, ինչը, ենթադրաբար առաջիկայում կշտկվի։ Զեկուցողը նշեց նաև, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկի նոր խմբագրությունում առկա չէ ուսուցչի կողմից թղթային տարբերակով դասի պլան գրելու անհրաժեշտություն, ինչը ևս մեկ քայլ է ուսուցիչների աշխատանքը թեթևացնելու ուղղությամբ։ Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև տարակարգի համար դիմող ուսուցիչներին, նշեց, որ այսուհետ նրանք նույնպես կարգով սահմանված դասի պլանները կարող են լրացնել իրենց էլեկտրոնային մատյաններում, ինչը հեշտացնում է փաստաթղթերի լրացումը և ուղարկում։ Զեկուցողը հավելեց, որ 2023-2024 ուսումնական տարում բոլոր ուսուցիչները ներկայացրել են իրենց օրվա դասի պլանները, որոնք առկա են ուսումնական մասում՝ էլեկտրոնային տարբերակով։ Առկա են նաև 2024-2025 ուսումնական տարվա համար գրված որոշ ուսուցիչների օրվա դասի պլանները, իսկ որոշներինն էլ գրված է մասնակի՝ 1-ին կիսամյակի համար կամ մինչև փետրվար-մարտ ամիսներ։ Զեկուցողը նշեց նաև դասի խնդիրների ձևակերպման մասին, շեշտեց, որ դրանք դասի պլաններում պետք է արտացոլված լինեն։

Հաշվի առնելով վերոգրյալը, զեկուցողն առաջարկեց 2024-2025 ուսումնական տարվանից սկսած դասի պլանները լրացնել էլեկտրոնային մատյանում դրա համար սահմանված բաժիններում։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Մ. Դանիելյանը

Արտահայտվողները կարևորեցին ՕԹՊ-ների մեջ նպատակների և վերջնարդյունքների առկայությունը, իսկ այսուհետ նաև յուրաքանչյուր դասի խնդրի ձևակերպման անհրաժեշտությունն ու «Դասի ընդլայնված պլան (տարակարգի համար)» և «Գործողություն» հատվածների լրացումը, ինչը թույլ կտա ճիշտ պլանավորել և արդյունավետ իրականացնել դասապրոցեսը, իսկ ուսուցչին կազատի կրկնակի աշխատանք կատարելու պարտադրանքից։

Որոշեցին՝ Մանկավարժական խորհրդի նիստում առաջարկել 2024-2025 ուսումնական տարվանից սկսած դասի պլանները լրացնել էլեկտրոնային մատյանում դրա համար սահմանված բաժիններում։

Լսեցին 4. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը։

(զեկուցող Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց փոխադարձ դասալսումների կարևորության մասին, ուսուցիչների միջև համագործակցային մթնոլորտի ձևավորման

անհրաժեշտության մասին: Կարևորվեց այն հանգամանքը, որ ուսուցիչները պետք է հնարավոր բոլոր միջոցները կիրառեն, որպեսզի կարողանան նպաստել աշակերտների հետաքրքրությունների ձևավորմանը, ինքնուրույն մտածողության, վերլուծական կարողությունների զարգացմանը:

Զեկուցողը ներկայացրեց և անհրաժեշտ համարեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել քննարկում՝ մեթոդական միավորումների ուսուցիչների մասնակցությամբ, օգնել ուսուցիչներին միջոցներ ձեռնարկել դասի արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների ինքնուրույն կարողությունների և հմտությունների զարգացումը ապահովելու համար: Հիշեցրեց, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել նոր ՀՊՁ-ների ներդրման գործնական գործընթացին և շարունակել 5-8-րդ դասարաններում դասալսումների կազմակերպման և քննարկման ընթացքում նկատված հարցերի ու խնդիրների շուրջ կազմակերպվող քննարկումներին:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Լ. Սարգսյանը

Անուշ Սարգիսջանյանը նշեց, որ պետք է շարունակել աշխատանքները, որոնք ուղղված են աշակերտների բանավոր գրագետ, ճիշտ խոսելու կարողությունների զարգացմանը, չմոռանալով նաև ուղղագրական խնդիրների մասին:

Լիլիթ Սարգսյանը նշեց, որ դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

Արտահայտվողները նշեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև այլ մեթոդական միավորումների ուսուցիչների հետ:

Լսեցին 5. 5-րդ և 7-րդ դասարանների սովորողների ընթերցողական որակների ստուգման նպատակով իրականացված հետազոտության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի» կողմից դպրոց ուղարկված շրջաբերականի բովանդակությունը՝ ըստ որի ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների սովորողների ընթերցողական որակների ստուգման նպատակով իրականացվում է հետազոտություն և որի շրջանակում անհրաժեշտ է մինչև սույն թվականի մարտի 10-ը տրամադրված թեստերով անցկացնել ստուգումը՝ առաջնորդվելով ուղարկված ուղեցույցով:

Ըստ պահանջի բոլոր դասարանների արդյունքների հիման վրա կազմվել է դպրոցի ամբողջական տվյալների աղյուսակները, նշել նաև արագության նվազագույն և առավելագույն ցուցանիշները՝ 1 րոպեում կարդացած բառերի քանակները (օրինակ՝ 7-րդ դասարան՝ նվազագույնը՝ 100 բառ, առավելագույնը՝ 160 բառ):

Զեկուցողը նշեց, որ ընթերցանության արդյունքները հիմնականում գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Ս. Հարությունյանը

Արտահայտվողները նշեցին, որ ընթերցողական որակների ստուգման նպատակով իրականացված աշխատանքները տեղին են և կարևոր են, քանի

որ ներկայումս նկատվում են որոշակի թերացումներ կապված սովորողների ընթերցանության և ընթերցածի ընկալման հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-րդ և 7-րդ դասարանների սովորողների ընթերցողական որակների ստուգման նպատակով իրականացված հետազոտության արդյունքները (կցվում է):

Լսեցին 6. Էլեկտրոնային մատենավարության ընթացիկ ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ դիտարկումները ցույց են տալիս, որ 2024-2025 ուսումնական տարում իրականացված մատենավարությունը հիմնականում գոհացուցիչ է: Որոշ բացթողումներ են արձանագրվել նոր չափորոշչային դասարաններում ամփոփումների գնահատականների ուշ փոխանցման հետ կապված: Շեշտեց, որ անհրաժեշտ է հետևել կարգի պահանջներին և ընթացիկ գնահատականները փոխանցել 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ամփոփիչ և ԹԳԱ-ների գնահատականները՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները կապված մատենավարության հետ, որպեսզի խուսափենք հետագա խնդիրներից: Մեկ անգամ ևս հիշեցրեց մատենավարության վարման կարգը, հորդորեց լինել ուշադիր գրավոր աշխատանքների արդյունքների և գրանցումների հարցում, համոզվել, որ կատարված գրանցումն ու փոխանցված արդյունքները ճիշտ են պահպանված: Կատարել համապատասխան դիտողություններ և հիշեցումներ մատենավարության վարման կարգի վերաբերյալ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն էլեկտրոնային մատենավարության ընթացիկ ստուգման արդյունքները:

Լսեցին 7. Զեկուցում «Դարձվածային միավորները ժամանակակից հայերենում (Խ. Աբովյանի Վերք Հայաստանի վեպի օրինակով)» թեմայի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Լ. Սարգսյան)

Զեկուցողը նշեց, որ թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ լեզուն՝ որպես հաղորդակցության դինամիկ և անընդհատ զարգացող համակարգ, առատորեն հյուսված է լեզվական այնպիսի երևույթներով, որոնք տարբնույթ իմաստ ու երանգ են հաղորդում մեր խոսքին: Այդ առումով առանձնանում են դարձվածքները՝ որպես լեզվական գրավիչ կառույցներ, որոնք հաճախ ամփոփում են տվյալ ժողովրդի մշակութային իմաստությունը, պատմական իրողությունները և փոխաբերական պատկերացումները: Սույն հետազոտությունը, դարձվածքների բարդ տիրույթում խորամուխ լինելով, ուշադրությունը հրավիրում է դրանց դրսևորմանը՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» նշանավոր երկում: Արդիականություն: լեզվաբաններին, Դարձվածքները գրականագետներին, վաղուց մշակութային հետաքրքրել են մարդաբաններին, հասարակագետներին և այլոց: Նրանցից շատերի արմատները ձգվում են դեպի հին քաղաքակրթություններ, երբ դրանք հյուսվում էին բանավոր ավանդույթների և պատումների մեջ: Ժամանակի ընթացքում դարձվածքային արտահայտությունները դարձել են ամենօրյա խոսակցության անբաժանելի տարրեր: Դարձվածքների ստուգաբանությունը, ձևը և գործառույթը հասկանալը առանցքային է լեզվի նրբերանգային շերտերը բացահայտելու համար: Այն լուսավորում է մշակութային հիմքերը, պատմական ազդեցությունները և ճանաչողական գործընթացները, որոնք ձևավորում են մեր խոսքը: Այս ուսումնասիրությունը ոչ միայն խթանում է

լեզվական բազմազանության ավելի խոր ընկալմանը, այլև կոնկրետ ստեղծագործության օրինակով, ինչպիսին աշխարհաբար լեզվով շարադրված երկն է՝ «Վերք Հայաստանին», թույլ է տալիս ուսումնասիրել լեզվի, մշակույթի և գրական ստեղծագործության փոխազդեցությունը: Ուստի թեև դարձվածքների վերաբերյալ ուսումնասիրությունները քիչ չեն, այս աշխատանքը ուրույն տեսանկյունից է մոտենում հարցին՝ նեղացնելով դրա շրջանակը կոնկրետ լեզվական և գրական համատեքստում և բացահայտելով դարձվածքների մինչ այժմ չուսումնասիրված նրբերանգներ: Նպատակ և խնդիրներ: Աշխատանքի նպատակն է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» երկի քննությամբ բացահայտել և մեկնաբանել հայերենի դարձվածքային համակարգը՝ ժամանակակից վիճակում և պատմական զարգացման մեջ: Սույն նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. տալ դարձվածքային միավորների սահմանումը,
2. ուսումնասիրել հայերենում գործածվող դարձվածքների ծագումը,
3. վերլուծել դարձվածքների ձևաբանական, բառակազմական, շարահյուսական և ոճաբանական առանձնահատկությունները:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաճախադեպ հանդես գալ նման զեկուցումներով՝ թե գիտական, թե մասնագիտական, թե մանկավարժամեթոդական թեմաներով: Զեկուցման մեջ արծարծված խնդիրները արդիական են և մտահոգիչ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Դարձվածային միավորները ժամանակակից հայերենում (Խ. Աբովյանի Վերք Հայաստանի վեպի օրինակով)» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

«30» ապրիլ 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից, 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատել:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
9. Էսսե գրելու հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝Ա. Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում առաջին անգամ դպրոցում տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տրվում են էլեկտրոնային տարբերակով: Այս սկզբունքով առարկայական գիտելիքի ստուգումն իրականացվել է ոչ միայն «Մայրենի» («Հայոց լեզու») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ») առարկաներից, այլ նաև հետևյալ առարկայափնջերով.

- 8-րդ դասարաններում՝ «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Ռուսաց լեզու»
- 7-րդ դասարաններում՝ «Երաժշտություն», «Կերպարվեստ»
- 7-8-րդ դասարաններում՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «ԹԳՀԳ»
- 7-9-րդ դասարաններում՝ «Գրականություն» և «Հայաստանի պատմություն»:

Զեկուցողը հիշեցրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու սկզբունքները, խոսեց այն մասին, որ աշակերտներն աշխատել են իրենց խելախոսներով (սմարթֆոններով), ինչը զգալիորեն կրճատել է ժամանակը, որն անհրաժեշտ էր առաջադրանքները լուծելու և դրանք թղթային ձևաթղթերում գրանցելու համար: Այս նոր մոտեցումը հնարավորինս նվազեցրել է տեխնիկական սխալների և անճշտությունների հավանականությունը: Միևնույն ժամանակ, այն խթանել է աշակերտների՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական նպատակով օգտագործելու հմտությունների զարգացումը: Գրավոր աշխատանքն ավարտելուց հետո աշակերտներն անմիջապես տեսել են իրենց գնահատականները, ինչպես նաև ճիշտ ու սխալ պատասխանները: Անհրաժեշտության դեպքում դպրոցն աշակերտներին ապահովել է համապատասխան սարքավորումներով և ինտերնետ հասանելիությամբ: Էլեկտրոնային եղանակով գրավոր աշխատանքների անցկացումը նպատակ ուներ արդիականացնել գնահատման գործընթացը, խթանել աշակերտների թվային հմտությունների զարգացումը և բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը: Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է դեպի ժամանակակից և թվայնացված կրթական միջավայր՝ նպաստելով աշակերտների թվային գրագիտության զարգացմանն ու կրթական արդյունքների բարելավմանը:

Զեկուցողն անդրադարձավ գրավոր աշխատանքների սահմանված կարգով տրվելուն և արդյունքների ամփոփմանը: Ներկայացրեց տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները, մասնավորապես, կանգ առավ տեղ գտած ակնառու թերությունների վրա:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Սարգիսջանյանը, Շ. Հովսեփյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը: Ավանեսյանը կարևոր համարեց աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքը, ինչպես նաև հիմք ընդունելով գրավոր աշխատանքների արդյունքները, դրանց

հիման վրա ընթացիկ աշխատանքային պլանների մշակում՝ կրթության որակի բարելավման ուղղությամբ:
Արտահայտվողները նշեցին նաև այն մասին, որ էլեկտրոնային տարբերակով տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ գրելը դպրոցում նորություն է, առաջադրանքների այս տեսակը հնարավորություն է տալիս իրականացնել գիտելիքների բազմակողմանի ստուգում, ինչպես նաև աշակերտներին սովորեցնում է աշխատել թեստերի հետ՝ էլեկտրոնային տարբերակով:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյաններում արդեն իսկ արձանագրված թերություններն ու անհամապատասխանությունները: Նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ մատյաններում արձանագրվել են թերություններ, մասնավորապես, թեմանեները ժամանակին չեն լրացվել և որոշ գնահատականներ ժամանակին չեն փոխանցվել:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը:
Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հետևել տրված ցուցումներին և գրանցումներն ու գնահատումը կատարել սահմանված կարգով և ժամկետներում, ինչպես նաև խստագույն պահպանել ՕԹՊ-ով սահմանված թեմատիկ հաջորդականությունը:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի հետ:

Լսեցին 5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց, որ ժամանակին մեկնարկել են Հումանիտար առարկաների մեթոդմիավորումում ընդգրկված «Հայաստանի պատմություն» և «Գրականություն» առարկաների քննական տոմսերի կազմման աշխատանքները, որոնք չափորոշչային պահանջներին ու ԳԹԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան են: Զեկուցողը նշեց նաև, որ կհաստատվի քննական առարկաների խորհրդատվությունների ժամանակացույցը:
Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը:
Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:
Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր

ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի փետրվարի 22-ի №10 և 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 495-Ա/2 հրամանները:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է):

Լսեցին 6. 9-րդ դասարանների ավարտական քննությունների քննական տոմսերի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն» առարկաներից: Զեկուցողը հավելեց, որ ուսուցիչների կողմից կազմվել են «Գրականություն», «Հայաստանի պատմություն» առարկաների քննական տոմսերը, որոնք համապատասխանում եմ ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին, իսկ «Հայոց լեզու» առարկայի քննական թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Լ. Սարգսյանը, Շ. Հովսեփյանը, Ս. Հարությունյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հարցաշարերը, հարցատոմսերը համապատասխանում են ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների հարցաշարերը, հարցատոմսերը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 7. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից, 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 4-րդ «Բ» դասարանի աշակերտներ Մերի Ավոյանի, Արամ Հակոբյանի ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխային ազատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից: Ինչպես նաև 9-րդ «Բ» դասարանի աշակերտներ Արեն Ասատրյանի, Լևոն Հայրապետյանի ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխային ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ Մերի Ավոյանի, Արամ Հակոբյանի ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից, իսկ Արեն Ասատրյանի, Լևոն Հայրապետյանի ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ,

կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ ԿԱՊԿՈՒ աշակերտներ Մերի Ավոյանին, Արամ Հակոբյանին ազատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգումից, Արեն Ասատրյանին, Լևոն Հայրապետյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

Լսեցին 8. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները՝ կապված ՀՊՉ ներդրման գործընթացի հետ: Նշեց, որ կատարած դիտարկումները, քննարկումներն ու դասալսումները միայն դրական նշանակություն և մեծ աջակցություն եղան 5-8-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար: Զեկուցողի կողմից նշվեց երկամսյա ամփոփումների կարևորության մասին: Նախապես պլանավորված աշխատանքների կազմակերպման ընթացքում պարզ դարձան այն արդյունքներն ու հաջողությունները, որոնք արձանագրվեցին տարեվերջին: Միայն կազմակերպված քննարկումների, դասալսումների և տրամադրվող խորհրդատվությունների արդյունքում հնարավոր եղավ հասնել դրական արդյունքի:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյանը

Արտահայտվողները կարևորեցին 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված դասալսումների արդյունքների քննարկումների ժամանակ վեր հանված խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ իրականացված տրամադրվող խորհրդատվությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուկույցը:

Լսեցին 9. Էսսե գրելու հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի մարտ ամսին ԿԶՆԱԿ-ի կողմից դպրոց է ուղարկվել նոր շրջաբերական, ըստ որի «Հայաստանի պատմություն» և «Գրականություն» առարկաներից 7-8-րդ դասարաններում անհրաժեշտ էր սովորողներին հանձնարարել գրել էսսե: Թեմաները ևս ընտրված էին ԿԶՆԱԿ-ի կողմից: Զեկուցողը հիշեցրեց, որ նախապես դպրոցները տեղեկացված էին էսսեի հետ կապված շարունակական աշխատանքների մասին՝ ամսական երկու անգամ թեմաները դպրոց ուղարկելու մասին:

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից արդեն կատարված հսկայական աշխատանքը:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողները կարևորեցին էսսե գրելու հմտությունների ձեռք բերմանն ուղղված աշխատանքները, բայց նշեցին նաև ժամանակի սղության մասին:

Խնդիրն այն է, որ սովորողները դժվարանում են պնդումների ձևակերպման և

թեմաների մտապահման հարցերում՝ եթե թեմաները առաջին կիսամյակում են ուսումնասիրել, անհրաժեշտ է լրացուցիչ աշխատանքներ իրականացնել, տրամադրել ժամանակ՝ լրացուցիչ աշխատել, հետո անցնել էսսե գրելու հետ կապված աշխատանքներին:

Նշվեց նաև էսսեի հարցադրումների և ուղարկված նյութի անհամապատասխանության մասին, որը հաղթահարելու համար ևս պահանջվում էր լրացուցիչ աշխատանքներ և ժամանակ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ էսսե գրելու անհրաժեշտության և դժվարությունների հետ կապված հարցերի քննարկման մասին տեղեկատվությունը:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ *ԱՐՏԱՀԵՐԹ*
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

«13» մայիսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման արտահերթ 10-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները քննություն են հանձնելու «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն» առարկաներից: Զեկուցողը հավելեց, որ ուսուցիչների կողմից կազմվել են «Գրականություն», «Հայաստանի պատմություն» առարկաների քննական տոմսերը, որոնք համապատասխանում են ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին, իսկ «Հայոց լեզու» առարկայի քննական թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից:
Զեկուցողը նշեց նաև, որ քննությունների ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԿԳՄՍ նախարարի հրամանը, ինչպես նաև ԳԹԿ-ի կողմից հաստատված ժամանակացույցը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները
Արտահայտվողները նշեցին, որ հարցաշարերը, հարցատոմսերն ու ժամանակացույցը համապատասխանում են ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2024-2025 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11

«29» մայիսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, նախագծային աշխատանքների ղեկավարներ)
4. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Մանկավարժական զեկուցում՝ «Բանավիճային դասերի կազմակերպումը պատմության դասերին և դրանց կիրառման առանձնահատկությունները» թեմայով:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
8. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի

արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, նախագծային աշխատանքների ղեկավարներ)

Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյանը, ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից իրականացված նախագծային աշխատանքները: 7-րդ «Ա», «Բ», «Գ» և 8-րդ «Ա»,«Բ»,«Գ» դասարանների աշակերտները «Հայոց լեզու», «Գրականություն», «Պատմություն» առարկաներից իրականացրել են նախագծային աշխատանքներ: Ներկայացված աշխատանքները բավականին հետաքրքիր էին, բազմաբովանդակ և ուսուցանող: Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց հատկապես միջառարկայական նախագծերի վրա, որոնք ավելի արդյունավետ և բովանդակային առումով ավելի հետաքրքիր նախագծեր էին: Բավականին հետաքրքիր էին նաև նախագծային աշխատանքների պրոդուկտները: Նախագծային աշխատանքի ղեկավարները հանգամանալից ներկայացրին հաշվետվություններն ու կատարած աշխատանքը և քննարկումների արդյունքում անդրադարձան մի շարք այլ հարցերի, որոնք առաջացել էին աշխատանքների իրականացման ժամանակ:

2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների ղեկավարները ներկայացրին իրենց հաշվետվությունները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին նախագծային աշխատանքների կազմակերպչական փուլերը, քանի որ հենց այդ ժամանակ են սովորողները դառնում ավելի հետաքրքրված և ներգրավված ուսումնական գործընթացում և ի հայտ են գալիս աշակերտների կարողություններն ու համագործակցային հնարավորությունները: Նշվեց նաև ուսուցիչների դերի և կատարած ուղղորդող աշխատանքների կարևորության մասին: Նախագծային աշխատանքների ղեկավարներն իրենց ներկայացրած հաշվետվությունների մեջ կարևորեցին նախագծային ուսուցման իրականացման համար սովորողների տարիքային առանձնահատկությունների և ֆիզիկական կարողությունների ճիշտ հաշվարկումը և թեմաների ճիշտ ընտրությունը:

Սոնա Հարությունյանը նշեց, որ այս դեպքում սովորողներն ավելի խորապես ուսումնասիրում են թեման, քան ստանդարտ դասերի ժամանակ և կարողանում են կապ ստեղծել տեսության ու գործնականի միջև: Նշեց նաև խմբերի կազմման հետևողական աշխատանքների մասին՝ անհրաժեշտ համարեց տարբեր կարողություններ ունեցող աշակերտներին ընդգրկել խմբերում, քանի որ այդպես հնարավոր կլինի սովորեցնել թիմային աշխատանքի հնարներն ու մեթոդները:

Անուշ Սարգիսջանյանը կարևորեց այն, որ նախագծային ուսուցումը աշխուժացնում է երեխաների ուսումնական գործընթացը, տարբեր գիտությունների վերաբերյալ նորանոր տեղեկեկատվություններ ստանալու ցանկությունը: Այն հնարավորություն է տալիս գործնական հմտություններ զարգացնել. կատարում են հետազոտություններ, տվյալների վերլուծություն

ներ, զարգացնում են նորարական մտածողություն և ինքնուրույն խնդիրների լուծման հմտություններ:
Արտահայտվողները նշեցին, որ նախագծի մեջ կարևոր դեր է խաղում քայլերի կատարման ճիշտ ընտրությունը՝ թեմայի ընտրություն, նպատակի և հարցերի սահմանում, տեղեկատվության որոնում ու վերլուծություն, աշխատանքի պլանավորում և իրականացում, արդյունքների ներկայացում, ինքնավերլուծություն և հետադարձ կապ: Իրականացված աշխատանքները փաստեցին, որ աշխատանքի ընթացքում միշտ չէ, որ ամեն ինչ ընթանում է պլանավորվածին համապատասխան: Այս դեպքում ուսուցիչները պետք է ուղղորդեն, օգնեն, քանի որ առաջացած հարցերի պատասխանները ի հայտ են գալիս նախագծի իրականացման ընթացքում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները:

Լսեցին 4. 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի արդյունավետ վերահսկողությունը պահանջում է համակարգված մոտեցում՝ ներառելով ծրագրային, կազմակերպչական և գնահատման բաղադրիչներ: Նա կարևորեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները՝ կապված ՀՊՉ ներդրման գործընթացի հետ: Նշեց, որ կատարած դիտարկումները, քննարկումներն ու դասալսումները միայն դրական նշանակություն և մեծ աջակցություն եղան 5-8-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար: Զեկուցողի կողմից նշվեց արդեն ունեցած փորձի (5-րդ և 7-րդ դասարաններ) և վերապատրաստումների ժամանակ ստացած գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների մասին: Նախապես պլանավորված աշխատանքների կազմակերպման ընթացքում պարզ դարձան այն արդյունքները, հաջողություններն ու բացթողումները, խնդիրները որոնք արձանագրվեցին տարեվերջին: Կատարված աշխատանքի արդյունքում ուսուցիչները կարողացան ապահովել աշակերտակենտրոն մոտեցում, զարգացնել գիտելիքների, հմտությունների և արժեքների ամբողջական ձևավորում, ինչպես նաև բարելավել կրթության որակը: Միայն կազմակերպված քննարկումների և վերլուծությունների արդյունքում հնարավոր եղավ գործընթացը հաղթահարել ավելի հեշտ և արդյունավետ:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Ա. Սարգիսջանյանը:
Արտահայտվողները կարևորեցին 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված դասալսումների արդյունքների քննարկումների ժամանակ վեր հանված խնդիրները, տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի կողմից տրամադրվող խորհրդատվությունները: Նշվեց նաև, որ ՕԹՊ-ներ կազմելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ամփոփումներին և գնահատման պահանջներին՝ ըստ ՀՊՉ-ների:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-8-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին տեղեկատվությունը:

Լսեցին 5. Մանկավարժական զեկուցում՝ «Բանավիճային դասերի կազմակերպումը պատմության դասերին և դրանց կիրառման առանձնահատկությունները» թեմայով

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ

արդի աշխարհի սրընթաց զարգացումը հանգեցրել է փոփոխության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթության ոլորտում: Ներկայումս ամենաբարդ և հրատապ խնդիրներից մեկն էլ հիմնարար գիտելիքներով զինված, ազատ, ինքնուրույն հասարակության մեջ լիովին ներառված և ստեղծագործ անհատների պատրաստումն ու դաստիարակումն է: Այս հարցում շարունակում է իր անգնահատելի դերը ունենալ դպրոցը: Ստեղծված պայմաններում կարևորում են հանրակրթական նկատելի բարեփոխումները, որոնք աստիճանաբար ավելի ու ավելի անհրաժեշտ և անխուսափելի են դառնում: Անհրաժեշտ է կարևորել մանկավարժական ժամանակակից մոտեցումները, դիդակտիկական սկզբունքների դասավանդման մեթոդիկան: Մեթոդաբանությունը գիտական հիմնախնդիրների լուծման ընթացքում ընդհանուր սկզբունքները, օրենքները, հասկացությունները կրում են ընդհանուր փիլիսոփայական բնույթ և հանդես են գալիս որպես գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդաբանություն: Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, հիմնավորված չէ, կրում է մտահայեցողական բնույթ: Պրակտիկան, որը հինավորված չէ գիտական տեսությամբ, տարերային է, չունի նպատակաուղղվածություն և պակաս արդյունավետ է: Ահա թե ինչու մանկավարժական հետազոտություններում կարևոր է գիտության և պրակտիկայի հավասարաչափ զարգացումը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիրակչական գործընթացի զարգացման ուղիները: Մանկավարժական հետազոտությունն ինքնանպատակ չէ, այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը:

Արտահայտվեցին՝ Ս.Հարությունյանը, Ռ.Խաչատրյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաճախադեպ հանդես գալ նման զեկուցումներով՝ թե գիտական, թե մասնագիտական, թե մանկավարժամեթոդական թեմաներով: Զեկուցման մեջ արծարծված խնդիրները արդիական են և անհրաժեշտ է քննարկել արդյունավետ մեթոդների կիրառումը դասաժամերին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ «Բանավիճային դասերի կազմակերպումը պատմության դասերին և դրանց կիրառման առանձնահատկությունները» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է):

Լսեցին 6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության իրականացման ընթացքում արձանագրված բացթողումներն ու թերությունները: Նա նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ հայտնաբերվել են անհամապատասխանություններ ՕԹՊ-ների և ՕԴՊ-ների միջև, ինչպես նաև տեխնիկական խնդիրների պատճառով որոշ գնահատականներ չեն պահպանվել: Բացի այդ, որոշ ուսուցիչների համար նորություն էր նոր չափորոշչային դասարաններում նախագծային աշխատանքների մատենավարության կարգը, որն իրականացվել է ճշգրտորեն՝ առանց շեղումների: Ամփոփելով մատենավարության ստուգման արդյունքները՝ մ/մ նախագահ Մերի Դանիելյանը նշեց, որ ընթացիկ ուսումնական տարում ուսուցիչների կողմից արձանագրված թերություններն էապես նվազել են՝ համեմատած նախորդ տարիների հետ:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Ընդգծվեց, որ մատենավարության գործընթացում առանցքային է

յուրաքանչյուր ուսուցչի անհատական ու պատասխանատու մոտեցումը: Նշվեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում որոշ թերություններ դեռ արձանագրվում են, ուստի կարևոր է հետևողական վերահսկողություն իրականացնել ուսուցիչների առօրյա աշխատանքի նկատմամբ: Առկա խնդիրները պետք է ժամանակին բացահայտվեն, քննարկվեն և վերանայվեն՝ թույլ չտալու համար դրանց խորացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 2-3-րդ և 5-8-րդ դասարանների աշակերտների համար: Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիման վրա: Ըստ սահմանված կարգի՝ 2-3-րդ դասարաններից ընդգրկվել են աշակերտներ, որոնք առաջադիմության բնութագրող գնահատման հիման վրա ցուցաբերել են ցածր արդյունքներ, իսկ 5-8-րդ դասարաններից՝ նրանք, ովքեր երկու անգամ անընդմեջ ստացել են 1-3 գնահատական:

Զեկուցողը հավելեց, որ իր կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ, և արձանագրված աշխատանքների արդյունքները գնահատվում են զոհացուցիչ:

Բացի այդ, զեկուցողը ներկայացրեց նաև 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ փետրվարից մայիս ամիսներին, իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգծելով դասապրոցեսի պատշաճ կազմակերպման, արդյունավետ անցկացման և արդյունքների կարևորությունը: Կարևորվեց նաև երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունների դերը, որոնց շնորհիվ ամփոփվեցին իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին ու արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 8. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների կազմման և համապատասխան դիտարկման թերթիկների լրացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն: Նա ընդգծեց, որ աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են հաստատված կարգի ու պահանջների համաձայն՝ ապահովելով ձևաթղթերի ճշգրիտ և ամբողջական լրացում: Շեշտվեց նաև, որ ԱՈՒՊ-ների ձևակերպման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել

աշակերտների անհատական կարիքների, ուսումնական առաջադիմության և հնարավորությունների վրա՝ նպատակ ունենալով ապահովել առավել արդյունավետ և նպատակային ուսուցում։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների կազմումը հնարավորություն է տալիս ավելի խորությամբ հասկանալու յուրաքանչյուր աշակերտի կարիքները և համապատասխանեցնելու ուսուցումը նրանց կարողություններին։ Կարևոր է, որ այս գործընթացը ոչ միայն ձևական չլինի, այլ ծառայի իրական աջակցման նպատակին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12

«27» հունիս 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, հումանիտար ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ ՄՄ անդամներ)
7. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանում:
(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, Ա. Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2024-2025 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի

արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ քննությունների արդյունքները գոհացուցիչ են. աշակերտների մեծ մասը ցուցաբերել է բավարար գիտելիքներ և կարողություններ, հաղթահարել է պահանջվող շեմը, որոշ դեպքերում արձանագրվել են նաև բարձր արդյունքներ: Այնուամենայնիվ, առկա են մի շարք խնդիրներ: Զեկուցողը կարևորեց նպատակային և հետևողական աշխատանքը՝ ոչ միայն առարկայական առաջադիմության, այլ նաև մտածողության զարգացման ուղղությամբ: Արդյունքների բարելավման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քննությունների ձևաչափին և աշակերտների գիտակցական մակարդակի բարձրացմանը: Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն» առարկաներից ավարտական քննությունների արդյունքները:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Ա. Սարգիսջանյանը

Արտահայտվողները կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները: 2025-2026 ուսումնական տարում ավարտական քննությունները բարձր մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել աշակերտների գիտելիքները զարգացնելու, բանավոր և գրավոր մտքերը արտահայտելու կարողություններ ու հմտություններ ձևավորելու, լեզվական գրագիտությունը ավելացնելու և աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է բանավոր և գրավոր քննություններին պատրաստման միասնական մոտեցումներ մշակել և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն ու հնարները աշակերտների մոտ պատասխանատվության բարձր արդյունքների հասնելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում հումանիտար առարկաների մասնախմբի ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը: Նշեց, որ կազմակերպված դասերին ու միջոցառումներին օգտագործվել են արդի ստեղծագործական մեթոդներ, ՏՀՏ գործիքներ, որոնք էլ նպաստել են աշակերտների ակտիվ մասնակցությանը: Կազմակերպված դասերն ընդհանուր առմամբ հաջողված էին, նպաստում էին աշակերտների ներգրավմանը, ուսուցիչների փորձի փոխանակմանը: Կազմակերպված դասերը ուսուցանող էին, երեխաները կիրառում էին արդի տեխնոլոգիաներ ու հնարներ, կատարում վերլուծություններ, զարգացնում քննադատական մտածողությունը, օգտագործում բանավեճի տարբեր տեսակների կիրառման

համար կարողունակությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:
Զեկուցողը ներկայացրեց բաց դասերի և դաս-միջոցառումների մասին տեղեկատվությունը՝ ըստ հաստատված պլանի:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Լ. Սարգսյանը:
Արտահայտվողները կարևորեցին աշակերտների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման գործընթացները: Բաց դասերը նաև արդյունավետ են ուսուցիչների մասնագիտական զարգացման տեսանկյունից, նպաստում են մեթոդաբանական կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Արտահայտվողները նշեցին, որ բաց դասերը պետք է կազմակերպվեն նպատակային, ժամանակակից մեթոդների կիրառմամբ՝ հնարավորություն ընձեռելով դիտարկելու դասավանդման նորարական մոտեցումները և խթանելու մասնագիտական համագործակցությունը: Արաքսյա Առստամյանը նշեց, որ պետք է հետևել հաստատված նվազագույն պահանջներին և համապատասխան այդ ցանկի ապահովել բաց դասերի, դաս միջոցառումների կատարողականը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը:

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Արմիդա Գևորգյանը կարևորեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքը նշելով, որ եղել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ խմբակները սահմանված օրերում չեն իրականացրել: Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը, նշեց, որ և՛ ընթացքում, և՛ ամփոփման ժամանակ արձանագրվել են թերություններ:
Խմբավարները ներկայացրին 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը
Սերգեյ Ավանեսյանը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն: Առստամյանն անդրադարձավ իր և Գևորգյանի կողմից ուսումնական տարվա ընթացքում իրականացված դիտարկումներին, որոնք իրականացվել են խմբակների դասերի ընթացքում: Շեշտեց, որ հիմնականում արդյունքները գոհացուցիչ են, սակայն առկա են խմբակներ, որոնք պատշաճ չեն իրականացվել և արդյունքները պետք է հաշվի առնել 2025-2026 ուսումնական տարում խմբակների ժամերը բաշխելու ժամանակ, ինչպես նաև հավելեց, որ որոշ խմբակներում աշակերտների մասնակցությունն ու հետաքրքրվածությունն էլ ավելի բարձր է, քան մյուսներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

Լսեցին 6. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան, ՄՄ անդամներ)

Մեթոդմիավորման նախագահը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:
Մեթոդմիավորման անդամները ներկայացրին իրենց հաշվետվությունները, ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ամփոփեցին արդյունքները: Առաջացած խնդիրներն ու հարցերը քննարկվեցին: Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքները:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Շ. Հովսեփյանը
Արտահայտվողները կարևորեցին ծավալված քննարկումները և մեթոդմիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ, ուսուցչի օգնական կապը: Նշվեցին տարվա ընթացքում առաջացած խնդիրները կապված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

Լսեցին՝ 7. 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները, կարևորեց քննարկված արձանագրությունների արդյունքները: Կատարված դասալսումները փաստում են, որ յուրաքանչյուր լավ պլանավորված դասի ընթացքում ևս առաջանում են խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ:
Դասալսումների ամփոփման արդյունքում արձանագրեցինք, որ ուսուցիչները կարողացել են զարգացնել քննադատական մտածողություն, համագործակցային հմտություններ, աշակերտների մոտ ձևավորել ինքնավստահություն, ապահովել սովորողների ակտիվ ներգրավվածություն ու բարձրացնել աշակերտների մոտ պատասխանատվության զգացումը:
Զեկուցողը նշեց նաև հաջողված դասերի մասին: Կարևորվեց նաև դասալսումներին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի, ՄԿԱ գծով համակարգող Արմիդա Գևորգյանի, մեթոդմիավորման մյուս ուսուցիչների, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումների անդամների մասնակցությունը և դրանց արդյունքում ծավալված քննարկումները:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Ա. Առստամյանը:
Անուշ Սարգիսջանյանը նշեց, որ դասալսման ընթացքում ուսուցիչը դիտարկում է տարբեր մեթոդներ, նոր մոտեցումներ, որոնք կարող է կիրառել իր դասավանդման մեջ, որն էլ կխթանի տվյալ ուսուցչի ինքնազարգացումը՝ ըստ անհրաժեշտության: Դասալսումները կարող են լինել համագործակցային գործընթացներ, որտեղ ուսուցիչները սովորում են միմյանցից և զարգացնում միասնական որակական չափանիշներ:
Արաքսյա Առուստամյանը նշեց, որ անհրաժեշտ է հաճախակի կատարել դասալսումներ, քանի որ յուրաքանչյուր դասալսում հնարավորություն է տալիս բացահայտել դասավանդման ուժեղ և թույլ կողմերը, ինչը կարող է ուղղակիորեն ազդել ուսուցման արդյունավետության վրա, և վերջապես փորձառու ուսուցչի դասալսումը կարող է օգնել երիտասարդ ուսուցչին ստանալ կառուցողական արձագանք և ճիշտ ուղղորդում:

Արտահայտվողները կարևորեցին կազմակերպված քննարկումները, որոնք ևս օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը: Դիտողություններն էլ արվում են միայն թերությունները շտկելու և ավելի բարձր արդյունքներ արձանագրելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին՝8. 2024-2025 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, Ա.Առստամյան)

Զեկուցող Արաքսյա Առստամյանը ներկայացրեց այն բոլոր փոփոխութ յունները որոնք սպասվում են նոր ուսումնական տարում՝ կապված 9-րդ դասարանում ևս նոր չափորոշչային պահանջների հետ:

Զեկուցող Մերի Դանիելյանը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարում 9-րդ դասարաններում նախնական ժամաբաժանումը պետք է իրականացվի նոր չափորոշիչներով: Զեկուցողներն առաջարկեցին վերջնական հստակեցումներից հետո օգոստոսյան առաջին նիստի ընթացքում քննարկել 9-րդ դասարանների փոփոխությունները, շեշտեցին, որ կլինեն ոչ միայն ժամաքանակի հետ կապված փոփոխություններ, այլ նաև կփոխվի առարկայացանկը:

Արտահայտվեցին՝ Շ. Հովսեփյանը, Ռ.Խաչատրյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաշվի առնել 9-րդ դասարաններում սպասվող փոփոխությունները՝ կապված հումանիտար առարկաների առարկայական փոփոխությունների հետ: Ռուզաննա Խաչատրյանը նշեց, որ անհրաժեշտ է 2024-2025 ուսումնական տարվա փորձը դարձնել կիրառելի, կատարել շտկումներ, փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության ու պահանջի:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա. Առստամյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում *Հումանիտար առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն:*

Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	26.08.2024	13
2	2	25.09.2024	5
3	3	23.10.2024	7
4	4	27.11.2024	5
5	5	24.12.2024	11
6	6	30.01.2025	8
7	7	27.02.2025	8
8	8	26.03.2025	7
9	9	30.04.2025	9
10	10	13.05.2025	2
11	11	29.05.2025	8
12	12	27.06.2025	8

Հումանիտար առարկաների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *65* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

Տնօրենի տեղակալ՝ _____ Ա.Առստամյան

«27» հունիսի 2025թ.